ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մարտի 2015 թվականի N 45 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԱԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՊԱՌԱՎԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ կետով և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2014թ. հոկտեմբերի 28-ի <<2015 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին>> թիվ 27-Ա որոշմամբ

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Վարագավան համայնքում համայնքի ղեկավարի և Պառավաքար համայնքում ավագանու հերթական ընտրությունները նշանակել 2015թ. հունիսի 7-ին:
2. Առաջարկել վերը նշված համայնքների ղեկավարներին.
   Օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:
3. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Մ. Մխիթարյանին.
   Ընտրությանների նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 40 ընտրատարածքային ընտրական և տեղամասային ընտրական հանձնաժողովի հետ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2015թ.մարտի 12
ք. Իջևան